

Ս. Հարությունյան. «Գիտության մի շարք ճյուղերով Հայաստանը մրցունակ է ողջ աշխարհում»

Վերջերս լույս է տեսել աշխարհում գիտության վիճակի վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2010թ. գիտական հաշվետվությունը, որում մանրակրկիտ ներկայացված են բոլոր երկրների գիտությունների վիճակագրական ցուցանիշները: 2000-2008թթ. գիտական հրապարակումների թվով Կենտրոնական եւ Արեւմտյան Ասիայում Հայաստանն առաջատարներից է եւ զիջում է միայն Իսրայելին: Հայաստանում գիտության ներկա վիճակի մասին «Արմենպրես»-ը գրուցեց ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի հետ:

-Պրն. Հարությունյան, Դուք ձեր մամուլի ասուլիսներում հաճախ եք նշում, որ հայ գիտնականների տպագրած հոդվածներով եւ վերջիններիս կատարված հղումների քանակով Հայաստանը տարածաշրջանում առաջատար է: Վրաստանի եւ Ադրբեջանի հետ համեմատելով՝ կոնկրետ վիճակագրական տվյալներ կներկայացնե՞ք:

-Այո՛, տարածաշրջանում տպագրված գիտական հոդվածների քանակով Հայաստանն իսկապես առաջատար դիրքերում է հարեւան պետությունների նկատմամբ: Նախորդ տարի միջազգային ամսագրերում տպագրվել է մոտ 540 գիտական աշխատանք: Այլ պետությունների հետ համեմատականներ անցկացնելու համար նախեւառաջ անհրաժեշտ է այդ թիվը նորմավորել: Այսինքն՝ տպագրված հոդվածների քանակը պետք է բաժանել կամ գիտնականների, կամ բնակչության թվի վրա: Մովորաբար այդ հաշվառումն իրականացվում է մեկ միլիոն բնակչի նկատմամբ: Այն պարագայում, երբ Վրաստանում ընդհանուր հրապարակումների քանակը 2008 թ.-ին եղել է 328, Հայաստանում այն եղել է 544 (ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների): Եթե նույն սկզբունքով առաջնորդվենք, ապա տպագրված հոդվածների քանակով գերազանցում ենք նույնիսկ Ռուսաստանին: Պետք է նշել, սակայն, որ Վրաստանում գիտության ոլորտում իրավիճակը քիչ-քիչ փոխվում է դեպի դրականը: Մինչդեռ վերջին տարիներին այնտեղ մի շարք բարեփոխումներ էին իրականացվել գիտության ոլորտում, որոնք դրական արդյունքներ չէին տվել: Օրինակ՝ լուծարվել էր ակադեմիական համակարգը, եւ ինստիտուտները հանձնվել էին բուհերին, ինչն, իմ կարծիքով, այնքան էլ ճիշտ քայլ չէր: Նման քայլ անելուց առաջ համապատասխան օբյեկտիվ պայմաններ են անհրաժեշտ, օրինակ՝ համապատասխան բյուջեի եւ կոնկրետ գործողությունների ծրագրի առկայություն: Ընդհանրապես, գիտության մեջ կտրուկ փոփոխություններ իրականացնելը շատ վտանգավոր է: Ներկայում աշխատանքներ են տարվում դրանք շտկելու ուղղությամբ: Ադրբեջանում, այս առումով, Գիտությունների ակադեմիան Խորհրդային միության փլուզումից հետո շարունակում է գործել, սակայն գիտության ոլորտը կանոնակարգող այլ պետական կառույցներ չեն ստեղծվել: Այսինքն՝ ակադեմիան այնտեղ օժտված է նաեւ կառավարչական լիազորություններով, որը, իմ կարծիքով, այնքան էլ ճիշտ չէ: Միայն գիտնականներից կազմված կառույցն է գորու չէ իրականացնել կառավարչական լիազորություններ: Հայաստանում, կարծում եմ, ավելի ճիշտ մոտեցումներ դրսևորվեցին, որոնք կարող են իրենց դրական արդյունքները տալ

հետագա ճիշտ քայլերի պարագայում: Ակադեմիան անհրաժեշտ է ենթարկել լուրջ բարեփոխումների: Նախ՝ հստակեցնել նրա դերակատարումը՝ որպես պետության գիտության ոլորտում գլխավոր խորհրդատուի, հստակեցնել նաև ակադեմիայի նախագահության իրավունքներն ու պարտականությունները՝ որպես ակադեմիական համակարգի հիմնարկների աշխատանքները կոորդինացնող կառույցի: Պետք է հստակեցնել ակադեմիկոսների եւ թղթակից-անդամների ընտրությունների չափանիշերը, տարանջատել գիտության ու գիտատեխնիկական ոլորտի լիազոր մարմնի եւ ակադեմիայի նախագահության լիազորությունները, օպտիմիզացնել ակադեմիայի նախագահության ուռճացված կազմը: Ինչ վերաբերում է Գիտության պետական կոմիտեին, ապա առաջին քայլն անելուց հետո անհրաժեշտ է իրականացնել գիտության եւ գիտատեխնիկական ոլորտի կառավարման միասնական համակարգի ստեղծում, որը կնպաստի հիշյալ ոլորտում միասնական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

-ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալներով՝ Հայաստանում գիտնականին տրվող տարեկան միջին աշխատավարձը 17 անգամ զիջում է Եվրոպայում աշխատող գիտնականի աշխատավարձին: 2007թ. Հայաստանում գիտությանը կառավարության կողմից տրամադրվել է 20 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար, Վրաստանում՝ 27.8, Ադրբեջանում՝ 114.4: Մեկ գիտնականի հաշվարկով՝ Հայաստանում գիտությանը տրամադրվել է 8.8 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումար, նախկին ԽՍՀՄ տարածքում այս ցուցանիշը տատանվում է 3.4-62.2 սահմաններում՝ ամենաբարձրը լինելով Ռուսաստանում: Ինչպե՞ս է հաջողվում նման ներդրումներով գիտության մեջ մեծ արդյունքներ ունենալ:

-Մեծ արդյունքներ ասելն այնքան էլ տեղին չէ: Ամեն ինչ համեմատության մեջ է: Դա մի քանի բացատրություն ունի: Նախեւառաջ, գիտության նկատմամբ հայերի մոտ կան գենետիկական լուրջ հակումներ: Երկրորդ՝ մեզ մոտ բավականին բարձր մակարդակի վրա է միջազգային համագործակցությունը՝ ունենք մեծ Սփյուռք, որտեղ բավականին լավ գիտնականներ կան եւ նպաստում են դրսի հետ մեր գիտական կապերի ամրապնդմանն ու զարգացմանը, ինչը չի կարելի ասել մեր հարեւանների մասին: Բացի այդ, կոմիտեն ակտիվ քաղաքականություն է վարում գիտական միջազգային համագործակցությունն ամրապնդելու եւ զարգացնելու ուղղությամբ՝ կնքվում են պայմանագրեր եւ հուշագրեր, հայտարարվում են գիտական ծրագրերի մրցույթներ՝ համաֆինանսավորման սկզբունքով:

-Ադրբեջանը գիտնականների թվով մի քանի անգամ գերազանցում է Հայաստանին: Դա ոչինչ չի՝ փոխում այնտեղ:

-Այո՛, գիտնականների թվով գերազանցում է, սակայն գիտությանը հատկացված ֆինանսավորման ծավալներն այդքան էլ մեծ չեն մեզանից. խոսքը մեկ գիտնականի հաշվարկով պետության կողմից հատկացվող գումարների չափի մասին է: Մեր եւ ադրբեջանցի գիտնականների համար հաշվարկվող միջին աշխատավարձերը գրեթե նույնն են: Վրաստանում գիտության ոլորտին հատկացվող ֆինանսավորումն ավելի քիչ է, նրանք իրենց համախառն ներքին արդյունքի 0,1 %-ն են տրամադրում գիտության ծախսերի համար: Նույնն է իրավիճակը նաև Լրդգստանում ու Տաջիկստանում: Նշեմ, որ վերջերս բավականին մեծացել է Ղազախստանի գիտության բյուջեն, որը կազմում է ՀՆԱ-ի 0,6 %-ը: Ուկրաինայում եւ Բելառուսում ոլորտի բյուջեն մոտենում է ՀՆԱ-ի 1%-ին, իսկ Մերձբալթյան

պետություններից ամենաբարձրը՝ Էստոնիան ու Լիտվան են, որտեղ գիտության համար բավականին լուրջ գումարներ են ծախսվում, այսինքն՝ գիտության ոլորտին հատկացնում են ՀՆԱ-ի մոտ 1,2-1,3 %-ի չափով ֆինանսավորում:

-Գիտության ո՞ր ճյուղերում է Հայաստանը մրցունակ աշխարհում:

-Էլեմենտար մասնիկների ֆիզիկա, մոլեկուլային կենսաբանություն, տեսական ֆիզիկայի որոշ ոլորտներ, օրինակ՝ տեսական աստղաֆիզիկա, մոլեկուլային գենետիկա, կենսատեխնոլոգիաներ, փոքր եւ մեծ քիմիայի որոշ ոլորտներ, մաթեմատիկա: Այս ոլորտներում մենք լուրջ դպրոցներ ենք ունեցել, որոնք այսօր էլ նույն ավանդույթներով շարունակում են աշխատել:

-Զարգացած գիտություն ունենալն ի՞նչ նշանակություն ունի պետության համար:

-Գիտությունն ու տնտեսությունը փոխադարձաբար կապված են միմյանց: Մեր ցանկացած աշխատանք տնտեսության այս կամ այն ոլորտի վրա ազդում է: Նույնիսկ հիմնարար գիտությունը շատ կարեւոր նշանակություն ունի տնտեսության տարբեր ոլորտների համար: Շատ հաճախ ասում են՝ ֆորմուլանե՛րն են կերակրելու ժողովրդին, ես համարում եմ, որ այո՛: Հենց գիտության շնորհիվ են հասարակության մեջ պակասում արատավոր երեւույթները՝ մարմնավաճառությունը, գողությունը, սպանությունները եւ այլն:

-Մեզ մոտ շատ գործուղումների նախաձեռնողը հենց իրենք՝ գիտնականներն են: Պետական մակարդակով կոնկրետ ի՞նչ ծրագրեր են իրականացվում:

-Արդեն երրորդ տարին է, մենք պետական բյուջեում հատուկ գումարներ ենք նախատեսել գործուղումների, գիտաժողովների եւ ամառային դպրոցների կազմակերպման համար: Մենք մասամբ ֆինանսավորում ենք գիտաժողովներն ու ամառային դպրոցները: Օրինակ՝ մեկ գիտաժողովի կազմակերպման համար նախատեսված գումարների միայն 10%-ն է կոմիտեն տրամադրում, մնացած գումարը գոյանում է անդամավճարներից եւ այլ կողմնակի աղբյուրներից: Անցած երեք տարիների ընթացքում ավելի քան 70 գիտաժողով ենք ֆինանսավորել: Ֆինանսավորում ենք նաեւ գիտնականների գիտական գործուղումների ճանապարհածախսերը:

-Հայտնի է, որ ՀՀ-ում դեռեւս առկա է «ուղեղների արտահոսք»: Ո՞րն է դրա պատճառը: Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում դա կանխելու ուղղությամբ:

-Մենք չենք կարող մարդկանց ստիպելով պահել Հայաստանում: Մեր խնդիրը հետեւյալն է՝ այնպես անել, որ երկրից մշտապես մեկնողների թիվը նվազի: Այս առումով իրականացնում ենք մի շարք միջոցառումներ, իսթանում ենք երիտասարդական գիտական ծրագրեր: Օրինակ՝ ֆինանսական աջակցություն ենք ցուցաբերում ամառային դպրոցների կազմակերպմանը: Անցած տարի 4 ամառային դպրոցի կազմակերպմանն ենք աջակցել՝ Բյուրականի աստղադիտարանի, Նորավանք գիտակրթական հիմնադրամի, Կիրառական խնդիրների ֆիզիկայի ինստիտուտի եւ Երեւանի պետական համալսարանի հետ: Ամառային դպրոցի շրջանակներում հրավիրվում են տվյալ ոլորտի հայտնի մասնագետներ, որոնք դասախոսություններ են կարդում ուսանողների համար, ինչն իրենց մասնագիտական

կարիերայի վրա մեծ, դրական ազդեցություն է ունենում: Մենք երիտասարդների համար ունենք նաև դրամաշնորհային լուրջ թեմատիկ ծրագրեր: Այդ ծրագրերով՝ նախ երիտասարդին հնարավորություն ենք տալիս միջազգային գիտաժողովների մասնակցել, որոշակի նյութեր ձեռք բերել, բացի դրանից՝ կարողանում են իրենց գիտական թեզը կամ աշխատանքը հաջող իրականացնել: Անցյալ տարվա վերջին եւս երիտասարդական մրցույթ ենք անցկացրել, որի արդյունքները դեռեւս չեն ամփոփվել: Համաձայն այդ ծրագրի՝ պետք է ֆինանսավորվի մոտ 20 դրամաշնորհային ծրագիր՝ 10 թիմային, 10-ն էլ՝ ասպիրանտական: Արդեն ստացել ենք 50-ից ավելի հայտեր: Այս պահին ընթացքում է նաև հայ-բելառուսական մրցույթը: Դա եւս դրամաշնորհային ծրագիր է, որն իրականացվում է համաֆինանսավորմամբ: Այսինքն՝ հայ եւ բելառուսական թիմերը ներկայացնում են համատեղ դրամաշնորհային ծրագիր: Այս տարի նմանատիպ մրցույթ կունենանք նաև Ֆրանսիայի հետ: Հունիս-հուլիս ամիսներին կհայտարարվի այդ մրցույթը, եւ 10-12 ծրագիր եւս կֆինանսավորենք: Այդ մրցույթներում պարտադիր պայմաններից մեկն այն է, որ դիմողներից առնվազն մեկը երիտասարդ գիտնական լինի: Այսինքն՝ ծրագրերի ղեկավարներին ստիպում ենք, որ ծրագրերի մեջ ներառեն երիտասարդներին: Մեր կոմիտեն նաև ուսումնասիրություններ է իրականացրել՝ պարզելու համար, թե 1992 թ-ից մինչև այսօր գիտական թեմաների ղեկավարների տարիքային կազմն ինչպիսին է եղել: Արդյունքում՝ պարզ է դարձել, որ մինչև այս դրամաշնորհային ծրագրերի մրցույթները՝ մինչև 35 տարեկան թեմայի ղեկավարներ գրեթե չենք ունեցել, իսկ հիմա մինչև 35 տարեկան թեմայի ղեկավարների թիվը Հայաստանում 12-13 տոկոս է, եւ ես սա մեծ ձեռքբերում եմ համարում: Մենք այսօրվանից գիտության մեջ լիդերներ ենք պատրաստում: Ինչը նշանակում է, որ ղեկավարների նոր սերունդ ենք ստեղծում՝ ուժեղացնելով նաև գիտության տարբեր ոլորտները: Այդ քայլը եւս արտահոսքը կանխելու լավագույն ձևերից է: Երիտասարդների արտահոսքը կանխելու մյուս մեթոդը բնակարանաշինության ծրագիրն է, որը ՀՀ նախագահի բարձր հովանու ներքո իրականացվեց նախ Երեւանի պետական համալսարանում: Նմանատիպ մի ծրագիր էլ իրականացվում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի աշխատակիցների համար, համաձայն որի՝ բավականին ցածր տոկոսադրույքներով վարկեր են տրամադրվում երիտասարդ գիտնականների ընտանիքներին, եւ վերջիններս հնարավորություն են ստանում մատչելի գնով բնակարան ձեռք բերել: Իհարկե, սրանք շատ քիչ են, եւ մենք այլ ծրագրեր անցկացնելու մասին եւս մտածում ենք: Օրինակ՝ կոմիտեն մի ծրագիր է նախաձեռնում, եւ հույս ունեմ 2012-13 թթ. դա իրականացնել: Խոսքը երիտասարդ գիտնականների համար հատկացվող հավելավճարների նոր համակարգի ներդրման մասին է: Այսինքն՝ մենք ռեյտինգավորելու ենք մեր երիտասարդ գիտնականներին իրենց տպագրած գիտական աշխատանքներով, իրենց թիմերի որակով եւ այլն: Առաջին լավագույն 50 գիտնականներն աշխատավարձից զատ կստանան նաև հավելավճար:

-Խոսեցիք տարածաշրջանում Գիտությունների ազգային ակադեմիայի նշանակության մասին, իսկ Հայաստանում Գիտության պետական կոմիտեի ստեղծումից հետո ինչպե՞ս եք գնահատում ԳԱԱ դերը գիտության կազմակերպման մեջ:

-Ես դեմ չեմ ակադեմիայի գոյությանը, սակայն ակադեմիան պետք է զբաղվի միայն իր ակադեմիական խնդիրներով՝ հիմնարար գիտության համակարգով եւ այլ գործառույթներով, որի մասին արդեն ասացի: Դրա հիմնական գործառույթներից է նաև պետությանը

խորհրդատվական ծառայություններ մատուցելը: Կառավարչական ֆունկցիաներ ակադեմիային տրամադրելուն ես դեմ եմ: Կառավարչական ֆունկցիաներ ունենում են նախարարությունները եւ կոմիտեները, այսինքն՝ մեր գործառույթները պետք է խիստ տարանջատվեն միմյանցից:

-Չե՞ք համարում, որ Հայաստանի գիտական հիմնարկների էլեկտրոնային կայքերի մեծ մասը պատշաճ մակարդակում չեն:

-Դուք ճիշտ եք: Բանն այն է, որ այսօր մեր ինստիտուտների տնօրեններն իրենց մենեջերներ չեն զգում: Մինչդեռ, նրանք նախելառաջ պետք է մենեջերներ լինեն, իսկ մենեջերի աշխատանքի որակն ապահովելու համար նրանք պետք է կարողանան իրենց համար լավ PR ապահովել: Կայքերի վատ վիճակը տնօրեններից է գալիս: Գիտության պետական կոմիտեն երեք տարի է, ինչ գործում է եւ օժտված է ոչ բավարար լիազորություններով, այդ թվում՝ մենք իրավունք չունենք ինստիտուտների տնօրեններին պարտադրել կայքերը մշտապես թարմացնել: Ընդհանրապես համակարգող կառույցը պետք է ավելի լայն լիազորություններով օժտված լինի: Ես բազմիցս ներկայացրել եմ մեր լիազորությունների եւ կարգավիճակի փոփոխության մասին նախագծեր, սակայն դեռեւս պատասխան չկա: Կարծում եմ, որ Գիտության պետական կոմիտեն պետք է լինի ոչ թե Կրթության եւ Գիտության նախարարության կազմում, այլ ՀՀ կառավարությանն առընթեր կառույց: Կոմիտեն որոշակի առաքելություն ունի, որն իրականացնելու համար, սակայն, բացակայում են համապատասխան լիազորությունները:

Հարցազրույցը՝ Աննա Եղիազարյանի